4) չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք գործատուի և շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) շահառուից և գործատուից պահանջել պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միմյանց միջև հաստատել աշխատանքային հարաբերություններ.

2) պահանջել գործատուից շահառուին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) կրկնօրինակը ներկայացնել տարածքային կենտրոն՝ այն ընդունելուց (կնքելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում.

3) մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը գործատուից ստանալ նախորդ ամսվա ընթացքում ծրագրին շահառուների մասնակցության (աշխատած ժամանակահատվածի) մասին տեղեկանք.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում գործատուից ստանալ շահառուին կատարված վճարումների մասին տեղեկությունները (վճարման ցուցակի պատճենով կամ տեղեկանքով).

5) իրականացնել պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

5. Գործատուն պարտավորվում է՝

1) պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ առնվազն երեք ամիս ժամկետով, և պատշաճ կերպով կազմակերպել շահառուի որակավորմանը համապատասխան աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը.

2) աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի կրկնօրինակը ներկայացնել տարածքային կենտրոն.

3) աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկանք՝ նախորդ ամսվա ընթացքում շահառուների աշխատած ժամանակահատվածի մասին.

4) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ.

5) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել շահառուի աշխատանքի էական պայմանները կամ շահառուի համար չսահմանել
առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի.

6) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետից շուտ շահառուին աշխատանքից ազատելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում.

7) պայմանագրի 9-րդ կետով սահմանված և տարածքային կենտրոնի կողմից իրեն վճարված գումարից շահառուին վճարել ամսական աշխատավարձ՝ 100 հազ. դրամի չափով՝ առանց աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճար.

8) ըստ անհրաժեշտության տարածքային կենտրոն ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ շահառուի սոցիալական վճար կատարող հանդիսանալու մասին:

6. Գործատուն իրավունք ունի՝

1) պահանջել տարածքային կենտրոնից չմիջամտելու գործատուի և շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և գործատուի կողմից իրականացվող գործունեությանը.

2) տարածքային կենտրոնից ստանալ դրամական միջոցներ՝ պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան.

3) պահանջել շահառուից ոչ ուշ, քան պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը.

4) տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել պայմանագրի կատարման ընթացքում տարածքային կենտրոնին հայտնի